«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

---

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2 , հեռ. 010 301000 2-38, 2-39, sci.council@ysmu.am

## «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի ԹԻՎ 3 ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) կանոնադրության 55-րդ կետը, գիտական խորհուրդը լսելով և քննարկելով զարգացման և մարքեթինգի գծով պրոռեկտոր Խ. Մարգարյանի «Զարգացման և մարքեթինգի կառուցամասի հաշվետվություն» թեմայով զեկուցումը.

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համալսարանի զարգացման և մարքեթինգի քաղաքականությանն ուղղված ընթացիկ աշխատանքները գնահատել բավարար (զեկույցը կցվում է) (26-03-03-01).

2.Հանձնարարել զարգացման և մարքեթինգի գծով պրոռեկտոր Խաչատուր Մարգարյանին՝

1) համակարգել Վրաստանի Հանրապետությունում ԵՊԲՀ մասնաճյուղի հիմնադրման, ինչպես նաև ԵՊԲՀ-ում Քեն Ուոքեր Միջազգային Համալսարանի մասնաճյուղի հիմնադրման աշխատանքները (26-03-03-02).

2) մշակել և հաստատման ներկայացնել «Ամերիկյան MD» ծրագրի ներդրման ճանապարհային քարտեզը (26-03-03-03).

3) մինչև 2026 թվականի սեպտեմբեր ամիսը ավարտին հասցնել ուսանողների վարկանշավորման համակարգի գործարկման աշխատանքները (26-03-03-04).

4) մինչև 2026 թվականի նոյեմբեր ամիսը ավարտին հասցնել գրադարանային ֆոնդի թվայնացման համակարգի գործարկման աշխատանքները (26-03-03-05).

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

5) մինչև 2026 թվականի դեկտեմբեր ամիսը ավարտին հասցնել ISO9001:2015 հավաստագրման աշխատանքները (26-03-03-06).

3. Ի գիտություն ընդունել ԵՊԲՀ կլինիկական օրդինատորների մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների վերաբերյալ գործատուների շրջանում կազմակերպված հարցումների արդյունքները (26-03-03-07).

4. Հաստատել «Սովորողների ներքին կարգապահական» կանոնակարգը՝ նոր խմբագրությամբ (26-03-03-08).

5. Հաստատել «Բարձրագույն կրթության կազմակերպման մասին» կանոնակարգը՝ նոր խմբագրությամբ (26-03-03-09).

6.Հաստատել «Ամփոփիչ ատեստավորման» կանոնակարգը՝ նոր խմբագրությամբ (26-03-03-10).

7.Հաստատել «Օտարերկրացի դիմորդների ընդունելության մասին» կանոնակարգը՝ նոր խմբագրությամբ (26-03-03-11).

8.Երաշխավորել տպագրության՝ նախապես էլեկտրոնային եղանակով քվեարկված հետևյալ ուսումնական գրականությունը, հեղինակներ՝ հյուսվածաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Կարմեն Սահակյան, նույն ամբիոնի պրոֆեսոր Մարինա Թաթոյան և ամբիոնի դոցենտ Գայանե Մկրտչյան՝ «Histology I» անգլերեն լեզվով ուսումնական ձեռնարկը (քաղվածքը կցվում է) (26-03-03-12):

9.Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ**